# 19. ՓԵՐԻՆԵՐԻ ՀԵՔԱԹ

Թակավորմ կէլնի, ունի իրեք տղա: Մէկ օր թակավոր ուր տղեյներ կկանչի, կասի. - Ա՛յ, բալամ, որ սար կէրթանք նեճիր, էնա մեյ սար չէրթանք, իմ նեսիբեթ էսա ի ծէ:

Թակավոր կմեռնի, մեկ օր ճյոչ տղեն կառնի էրկու խնազար զորք, կէրթն սարեր ամբողջ փուղու: Կխասնի էն սար, որ խեր ասեր էր՝ մե՛ք էրթա:

Էն գյանխ, որ էն սար կփուա, տիսնա, որ ըմեն տեխեն անմախութենի խոտ կուգյն:

Տղեն կասի. - Վա՛յ, խերի՛կ, գյոռբագյոռ էլնես, տյու ի՞նչխ չէր թողնէ որ էսա սարեր փոենք: Իսկի խեր ուր տղին աղեկ կուզի՞:

Խնբնր մեչ պենին էր, մեկ էլ էրկինքյ-գյետինքյ մթնտավ. վիշապմ բոռալեն, գյոռալեն իզնրկ: Զնրնելուն պես թակավրու լաճն էլ, ուր ասքյըրին էլ փճցուց, խաստ չիթող:

Մնաց քանիմ օր, քյաղքյի միլաթ ժողվոտվան, էկան օրթնչի ախպոր վերեն կռիվ թէ՝ ու՞ր է մեր ասքար, ի՞նչ արիքյ, դեռ՞ր կուրիսիցիք:

Օրթնչի ախպերն ի, կառնի էրկու խնզնր զորք, կէրթն էլմ էն սարեր կփոա: Էլմ կէրթն էն սար, տեսնա, որ անմախութնի տեղ ի:

Էլմ էն էլ կասի. - Վա՛յ խերիկ, գյոռբագյոռ էլնես, տյու ի՞նչխ չէր թողնէ, որ էսա սարեր փոինք: Իսկի խեր ուր տղին աղեկ կուզի՞:

Խնբնր մեչ պենին էր, մեկ էլ էրկինքյ-գյետինքյ մթնտավ. վիշապմ բոռալեն, գյուալեն իզար: Զնրնելուն պես թակավրու լաճուն էլ, ուր ասքյըրին էլ փճցուց, խաստ չիթող:

Մնաց քանիմ օր, քյաղքյի միլաթ ժողվոտվան, էկան պստիկ ախպոր վերեն կռիվ, թէ՝ Ու՞ր է մեր ասքյար, ի՞նչ արիքյ, դեռ՞ր կուրիսիցիք:

Պստիկ ախպերն առեց մեկ քյոռ մարթ, մեկ ըլխթիար, ուր խոր ծին խեծավ, մեյտեղ էլնն կննցին էլմ էն սար: Տղեն փոսմ փորեց, խալիվոր կայնցուց մեյ կողմ, քյոռ կալնցուց մեյ կողմ, ինքյ մտավ փոսի մեչ:

Մեկ էլ տեսան, էրկինքյ-գյետինքյ մթնավ, վիշապ պիտի գնէր քոռուն, տղեն փոսի մեչեն նետվանեղով իզնրկ, վիշապ սպանեց:

Էն տեղեն իրիշկաց, տեսավ, որ դաշտի մեչ կրակմ կէրևա, էլավ ծին իտոր քոռուն, խալիվրուն էլ էօրէոխկեց ուր խոր թախթ, ինքյ կննց տեսնա խենքյ ի՞նչ կրակ ի:

Կնաց, կնըց, տեսավ, որ քյառսուն խա դև նստեր են, քյառսուն կանթեն պղինձմ դրեր են օճխի վերեն. կեռցուցեն:

Խետ խասավ դևերաց մոտ. նը՛ պարև. նը՛ աստծու պըրին, նստավ էնտեղ՝ շոտ արեք, ասաց, կերակուր պերեքյ, ես ուտեմ:

Դևեր մտածեցին, ասին. - Ջա՛նմ, մենքյ քյառսուն ախպեր ենք, աշխար մեզնից կվըխենա: Էսա ի՞նչ մարթ ի, որ խետ խասնելուն՝ նը՛ պըրև, նը՛ աստծու պըրին, ճըմըն ասաց՝ խաց պերեքյ ուտեմ, - վըխեցան, ասին. - կէլնի, որ էսա շատ զոռբա մարթմ ի, - էլըն կերակուր պիրին, տվին, կերավ:

Էնտեղ էրկու-իրեքյ օր մնաց: Էնտեղ դևեր մեկօր մեչ մեյ մկու զրյուցեցին, ասիցին. - Ախպե՛ր, ի՞նչխ անենքյ իսոր խետ, մե չկա՝ ուտենքյ, մնաց իսո՞ր տանքյ:

Տղեն, որ լսըվ, ասաց. - Ծեր մունաւթ շանց տվեքյ, էրթըմ պիրեմ ես էլ ուտեմ, տյուքյ էլ կերեքյ:

Դևեր պստիկ ախպեր տրին խետ տղին, էորեոխկիցին ուրենց ճեռչ ախպոր մոտ: Ասին. - Մե՛ր ճեռչ ախպեր փլան սարն ի, թե կանաս ինոր մալեր պիրե՝ մե խերիքյ ի:

Տղեն էլըվ ճըմբըխ, խասավ ճեռչ ախպոր տան մոտ, պստիկ դև, որ կտառներ, տղեն ասաց. - Ախպե՛ր, ախպե՛ր, ի՞նչ գյախ որ բայրաղ կքյըշեմ, էկեքյ մալեր տարեքյ:

Տղեն կնըց, մտավ դևի տուն: Տեսավ քյառսուն գյլխե դևմ պառկեր էր, քյներ էր: Տղեն ինչխ որ արաց, դև չակխավ: Իշկաց տեսավ, որ քյառսուն կանթե պղինձմ վեր օճխին կեռեր: Էն տեղեն վերուց գյութնի խոփ, իտեր օճախ, կարմրցուց, իտեր վեր դևի ոտաց:

- Էօ՛ֆ, - ասաց դևն, - լուն զի կծեց:

Տղեն ասաց. - Ջա՛նմ, ի՞նչ լու, ես եմ, էլի՛ վեր:

Դևն էլըվ վեր, տեսավ, որ իր տուն իսանօղլիմ իկե: Ասաց. - Էօ՛ֆ, էսավուր ուտելիքս էղավ, մնաց վաղվան:

Տղեն ասաց. - Էլի՛ վեր տեսնանք, աստված յա զի կուտայ, յա՝ քյե:

Դևն էլավ վեր, առեց ուր ծեռ քյառսուն կտրանոց գյուրզ, ասաց.

- Դըշ ես զըննեմ, թե՝ տյու:

Տղեն ասաց. - Դըշ տյու զըրկ:

Դևն իրեք տիր ուր գյոտզն իզըր, թիզ դուման տղին պռնեց:

Տղեն ասաց. - Մ՛կա դեռրն էկավ զիկ:

Վերուց քյառսուն կանթեն պղինձ, իզըր դևու ճայտի մեչ, դևն իսկեց:

Դև ինգյըվ զյետին, մեռավ: Ինոր տան մեչ էդա մեյ պղինձ մենակ կեր: Տղեն էլըվ բայրւաղ քյաշեց, ախպերներն էկան էն պղինձ առին, կնացին: Տարան պղինձն ծախիցին, էրկու իրեք օր էլ էն կէրան:

Դևեր էլմ իրենց դրոց արիցին: Ասին. - Ջա՛նմ, մի չկա մենքյ ուտենքյ, ըսրա՞ն որտեղեն կերիցուցենքյ:

Տղեն լսըվ, էլմ ասաց. - Կոխեմ ծեր մունըթ, նշանց տվեքյ, էրթըմ պիրեմ, տյուքյ էլ կիրեքյ, ես էլ:

Ասին. - Թե որ կարցար Զին-Համամի մալ պիրես. չում մեր մախ մե խերիքյ ի:

Դևերն էլըն պստի ախպեր էլմ տրեցին խետ: Տղեն կնըց, խասավ Զին-Համամու քյադքյի մոտ: Դև տըռցավ: Տղեն մտավ քյադքյի մեչ, իսոր-ինոր խարցուց, թե Զին-Համամին, ո՞ր տեղն ի:

Էն տեղեն էրկու մարթ էկան. տղեն խարցուց. - Ախպե՛ր. Ջին-Համամին ու տե՞ղն ի:

Իսոնքյ էլ վերցրին ասին. - Է՜յ, ճերիֆ. քյո քյա̈մմա̈լն ի՞նչ ի. որ Ջին-Համամի կխարցուցես:

Տղեն ասաց. - Ջա՛նմ, ծեր պերնե քյրե մը կպայսի՞. որ ասեքյ:

Էն մարթեր քիչմ զատացան, տա̈ռցան ասին. - Ջա՛նմ, որ ասենք ի՞նչ կէլնի:

Բոռացին տղին ասին. - Տղա՛, տղա՛. գյեռ էնա տեղն ի, կնա̈ մտի ներս:

Տղեն կնա̈ց տոտն ի պաց. մտավ ներս: Էճավ գյետնի տակ: Տեսավ մեկ խանի գյլեռխ էկավ ռաստ:

Տղեն ինքյն ուր ասաց. - Ա՛ռ, ւաղշիբաշի. էսա շինե, վուշեմ տու ես ուտեմ:

Մե քիչ էլ էճավ, իսանի ջանդակ էկավ առա̈ճ. վերուց ինքյն ուր ասաց. - Ա՛ռ, ւաղշիբաշի. մեկ կզա̈թմեմ շինե՝ ուտեմ:

Էրկու-իրեքյ բասամաղ էլ էճա̈վ տեսավ, որ ուր չում ծիյվեր տա̈ռցա̈վ քար: Էն տեխեն մե խոտնի խրեղեն աղչիկ էկավ, զիրկն էլ պստիկ տղեմ կեր:

Տղեն ծեռ իթա̈լ աղչկա բլակ պռնեց: Աղչիկ էն կանդուր չխչփվավ. կուզեր տղեն տեր լաճու գյիրկ ինքյ փախեր, չկարցավ: Որ շատ չխչփվավ. աղչկա բլազյուկ մնաց տղի ծեռ. ինքյն ուր տղեն էլան ջուխտոմ եղունիկ, թռան կնացին:

Թե որ աղչկան չպռներ, տղեն բյուսբյութուն պիտի տառներ քար: Աման որ աղչկան պռնեց, էլմ էլա̈վ մարթ:

Իշկաց ըստեխ. էնտեխ, տեսավ ուրիշ պա̈ն չկա էնտեղ, բլազկի թայն առեց, կնա̈ց մոտ ոսկրիչ:

Ոսկրչուն ասաց, թե. - Ըսրան մե թայ բլա̈զյուկ շինի:

Ոսկրչու մոտ յաճուդիմ էլ նստեր էր:

Ոսկրիչ առեց իրիշկաց, ասաց. - Կշինեմ: Չորս օրից արե, տար:

Տղի էրթալուց սորա յաճուդին ոսկրչուն ասաց. - Էսա բլա̈զյուկ անզյին ի, իսոր նմուշեն մեջ ջուխտ շինի առ տու դա̈, որ կուգյա̈ շատ ծեն ծյուն կխանի. ասա, էն բլա̈զյուկ յաճուդուն էր, ճանչցավ տարավ:

Ուրպաթ օր տղեն էկավ. ասաց՝ Շինե՞ր ես: Ասաց՝ Շիներ եմ:

Տղեն իրիշկաց տեսավ, որ ուր բլա̈զյուկ չի, ասաց. - Էսա իմ բլա̈զյուկն չի. իլլա՛ճ, իմ բլա̈զյուկն կուզեմ:

Էնտեղ որ շատ կալաբալաղ արաց, ոսկրիչն ասաց. - Ջա՛նմ, էն յաճուդին ասաց՝ քի իմն ի. առեց, տարավ:

Յաճուղին էն տեխեն էկավ, տեսավ, որ տղեն կայնե խետ ոսկրչուն կռիվ կանի, ասաց. - Է՜յ տղա, էսա բլա̈զյուկն իմն ի, ճա̈մ իսոր խետն էլ շատ պա̈ն ի կուրիսե:

Էրկուսն էլ էլա̈ն կնա̈ցին մո թակավոր: Յաճուղին թակավորուն ասաց, թե էսա բլա̈զյուն իմն ի, ընցած օր էսա տղի ծեռ պռներ եմ և բլա̈զյուկի խետ շատ մալ ի կուրիսե:

Տղեն ասաց քյի՝ Թակավոր ապրած կենաս, զի քյառսուն խատ ախպեր, ինոնքյ ճմեն էլ կտնեմ մո քյե ըռճեն. զի քյառսուն օր սու, ես էրթա̈մ, թե բլա̈զկի թա̈յ պիրի՝ պիրի, չէ՝ խո իմ քյառսուն ախպեր սպանի: Աման, իմ ախպերներաց խամար պիտի օրական մեչ փոռն աշխատի, չում իմ տա̈ռնալ, յաճուդու քիսուց:

Յաճուղին պայման ընդունեց. - Հա̈մ դա̈, - ասաց, - իրեքյ խարեր ոսկի ունեմ. էն փա̈րեք կկիրցուցեմ ինոնց. թե խլսավ՝ պա̈նմ էլ իմ միլա̈թից կվերցնեմ, կկիրցուցեմ:

Ախպերներ դրեց մո թակավոր ըռհա, ինքյ էլյավ կնաց: Շատ կնաց, քիչ կնյաց, խասավ մե օվա դաշտի մեչ: Տեսավ ծիավորմ էն տեխեն կբռռա, կասի. - Է՛յ տղա, խավքն ուր թիվով, օցն ուր պորտով չէր կանե էստեղ գյալ, ի՞նչխ էկար տյու:

Կասեր, մեյ տեխեն էշ, ծին կքշեր տեխ տղեն: Վերջն որ տեսավ, որ չէր կանե խասնե տղին, ասաց. - Աստված սիրես, կայնի մե խոսկմ ասեմ, նոր կնյա:

Տղեն կայնավ, ծիյավոր մոտացավ թե չէ՝ ճերսլյամիշ էլյավ, որ զյներ տղին: Տղեն իննրից շոտ դավրամեշ էլյավ, ծեռ իթալ իննր բյյկին պռնեց, քյաշեց տակ, գյլեոխ խնեց զանգյույի մեչ, էլյավ ծին խեծավ:

Պիտի կշեր, ծիյավորն ասաց. - Աստված սիրե՛ս, էճի, մեյ խոսքմ ասեմ քյե, նոր ինչ կանես արա:

Տղեն որ էճավ տակ, ծիյավորն էլյավ ջուխտ եղունիկ, փը՛ռ, թռավ կնյաց:

Տղեն ինգյյավ ճամբախ կնաց: Շատ կնյաց, քիչ կնյաց, կնյաց խասավ ծովու յյափ: Տեսավ ծովու վերեն գյյամիմ կայներ էր, նյա՛ կէրթեր, նյա՛ կուգյեր:

Ասաց. - Գյյամչի, ընչի՞ նյա՛ կէրթյաս, նյա՛ կուգյաս:

Տղեն ուր շորերն իխան, ուրն իթալ ծով, կնյաց մեչ գյամուն, տեսավ որ գյյամին կայներ ի, գյամչուն ասաց. - Ի՞նչ ելե՝ չես քշե:

Գյամչին կասի. - Վալլա չեմ կիտե, նյա՛ կէրթյա, նյա՛ կուգյա:

Տղեն կէճնի գյյամու դումանի թարսւֆ, կտեսնա, որ խուռնի խրեղեն աղջիկմ, ծամեր փաթյութեր ի գյյամու դումնին, պռներ ի:

Տղեն ծեռ կթյալի աղջկան բռչամ կայիմ կպռնի: Աղջիկ կչխչփվի, ուր ծամեր կմնա տղի ծեռ, ինքյ կէլնի մէ եղունիկմ, թռնի կէրթյա:

Գյյամին կէրթյա, տղեն կասի. - Գյյամչի կայնի՛, կայնի՛:

Գյյամչին կասի. - Է՛, ի՞նչ անեմ, ծի չէ, որ գյյամ քյաշեմ:

Տղեն ուր կթյալի ծով, կուգյա կէլնի տյուս: Խալավ կխայնի, կէրթյա:

Շատ կէրթյա, քիչ կէրթյա, կտիսնա, որ էնտեղ մեյ պանցր տունմ կէրևա, դողրի կէրթյա կմտնի էտա տուն:

Կտիսնա, որ էտա տան մեչ կան չում քյսան, երսուն էօդա: Էօդեքյ ճմեն կփռա, կտիսնա, որ զյադ չկա, ճմեն էլ դյւրդակ, կմտնի մեյ պուճախմ, կպախկվի կասի՝ մնամ ըստեղ, խենքյ իրիկուն վո՞վ կուգյա ըստեղ:

Իրիկուն կտիսնա, որ չորս ջուխտ եղունիկ մեյ կողմից էկան, չորս՝ մեյ կողմից, տաս ջուխտ մեյ կողմից էկան, էրկու՝ մեյ կողմից էկան: Էկան ճմեն լցվան էօդեն, ուրենց շորեր փոխեցին, էլյան խուռնի խրեղեն աղջիկ: Իրեք խատ իդոնցից ճեռյվան կնյացին էն մեկ էօդեն, էնմեկելներ մնացին էդա տեղ:

Էն ճեռկվողներ խաց կերան, ասին. - Դե քյեորեր, անեքյ խենքյ ի՞նչ եքյ լսե, ի՞նչ եքյ տեսե, պատմեքյ խենքյ:

Ծեռչ քյեոր ըսկսեց պատմել, ասաց. - Մեկ օր ես Ջին-Համամին ի, էնտեղ ջահելմ էկավ մտավ Ջին-Համամին, ութ-տաս բասամաղ էճյավ, իմ խալայեղի գյլեոխ կտրեցի թյալեցի դեմ, ասաց՝ առ, ւաղջիբաշի՛, էսա շինի մեյ փյաչեմ, ուտեմ:

Քիչմ էլ էճյավ, խալայեղի ջյանդյակ թյալեցի դեմ, ասաց՝ առ, ւաղջիբաշի, մե կզարթմեմ շինի ուտեմ:

Էճյավ ցաձր, իդոր ծիյվեր դյոցուցի քար: Աման խե զի տեսավ, ծեռն իթյալ իմ բլակ կայիմ պռնեց: Ես չխչփվա, բլյագյուկ մնաց իննր ծեռ, ես էլյա ջուխտմ եղունիկ, թռա կնյացի, մկա էն ըստեն էլներ՝ էն զի, ես՝ նրան:

Սորա օրթյանչյան խարցուց ասաց. - Տյու ի՞նչ ես տիսե:

Ասաց. - Օրմ դաշտիմ մեջն ի. մեյ մարթմ կէրթեր: Էնչափ բոռացի՝ երիտասարթ՝ խավքն ուր թիվով, օցն ուր պորտով էսա տեղ չէր կանե ցյեր. տյու ի՞նչխ էկար:

Տղեն չէր դնդրե. կէրթեր: Աստծու սեր տվի. տղեն դնդրավ: Բնշեցի. որ մզրախս զանի, ամմա էն զիզնից շոտ դավրամիշ էլավ: Ծեռն իթնլ. զի քնշեց տակ, իմ գյլեոխ խճեց զննգյոփ մեջ, էլավ խեծավ:

Ես ասի՝ աստված սիրես, էճի տակ. քյե մեյ խնբնր կա ասեմ. նոր քյշես. քյշի:

Էն էճնավ տակ թե չէ՝ ես էլա ջուխտ եղունիկ, թռա, ա՛խ, մկա էն ըստեղն էլներ, էն զի, ես՝ նրան:

Սրեն էկավ պստիկ քյոփոշ:

Պստիկ քյեոր պատմեց. - Ես յոթն օր իմ բոչամ թալեր ի գյաւմու դումսան կայներ ի, շանել տղեմ էնղեխեն էկավ գյնմչուն խարցուց, ասաց. - Գյնմչի. ընչի՞ կայներ ես, նն՛ կէրթնս, նն՛ կուցյնս:

Գյնմչին ասաց. - Ջանե՛լ, ես էլ չեմ կիտե, էսա յոթն օր նն՛ կէրթն, նն՛ կոպյն: Տղեն էկավ մտավ գյնմին, մտավ ծովու մեջ, ծեռ իթնլ իմ բոչնմ պռնեց: Էնքան չխչփվա, էնքան չխչփվա, չում իմ բոչամ մնաց ինոր ծեռ, ես էլա խավքմ, թռա. կննցի:

Ախ, էն տղեն ըստեղ էլներ, էն զի. ես նրան:

Տղեն որ էդա խնբրներ լսավ, էլնավ կննց մտավ իտոնց էօդեն: Իրեքյ քյեորեր իտոր վերեն շատ ուրախցան, խարցուցին. - Էն ի՞նչխ էլավ, որ տյու էկար ըստեն:

Կասի. - Հալ քեֆյաթ, էն օր որ ես Ջին-Համամին մտա, քյու բլնզյուկ, որ տարա տվի ոսկրչուն, ասի՝ ըսրան մեյ թայ շինի, էնտեղ յանոտիմ կեր, էլնավ էն բլազուկին տեր, ասաց՝ իմն ի: Մկա ես իմ քյառսուն ախպեր դրեր եմ մո թակավոր ըոնն, քյառսուն օր էլ օր եմ առե. որ բլնզկի թայ տանեմ ախպերներացս ազատեմ:

Աղչկներ կխարցուցեն, կասեն. - Քանի՞ օր ի, որ էլեր ես էն տեղեն:

Տղեն կասի. - Էլնավ եռսունեյոթ օր:

Աղչկներաց ճեռչ քյեոր կասի. - Որ ըսկուն ի, էրկու օր էլ ըստեղ կաց, քեֆ անենքյ. էն մեկէլ օր քյե կխասուցեմ քյո տեղ:

Էրկու օր քյեֆ կանեն, կուտեն, կխմեն, մեկէլ օր կխանեն իրեքյ քյուրոջ բլնզուկներ, էրկու շուխտ մեյ թաքյ, կուտան տղին, կասեն. - Տար էսա բլնզկներ, ազատի քյո ախպերներ, էյմ տասցի, մենքյ իրարու ենքյ:

Քյեորեր կկանչեն ուրենց խսզայեղնեն, կասեն. - Էսա մարթուն տար ուր տեղ:

Խալայեղ տղին կառնի վեր ուր թիվին, կպանցրանա, կպանցրանա, կպանցրանա, կասի տղին. - Իշկա՛, խենքյ աշխար ինչքա՞ն կէրևա:

Կասի. - Մեկ արտաչափ կէրևա:

Քիչմ էլ կպանցրանա, կասի. - Ինչքա՞ն կէրևա:

Կասի. - Էլ զատ չէրևա:

Էն տեղեն կէճնի, կէճնի, կէճնի, կխասնի էտա քյաղաքյի մեջ: Կքյնշի ուր թիվից փիտուրմ, կուտա տղին, կասի. - Եփ տաս կրակ, ես կուցյնմ:

Տղեն եռսուննևին օր էր, որ անքուն էր մնացե, խետ կէճնի գյետին. կիյնի էնտեղ, կքնի կմնա:

Էն օր քյառսուն օր կթմմի, դևերաց կառնեն տանեն, որ կախեն:

Ժողովուրթ ամբողշ կթնփին կէրթնն որ դևերաց կախել թամաշա անեն:

Տղեն էլ վեր ճամփեն պառկուկ ի, չար տղեմ կուգյա̈ էրկու ոտնով կթոնի վեր արա փորին, որ կթոնի՝ տղեն կակխի. կէլնի վեր:

Էն թոնող չար տղեն կասի. - Ի՞նչ ես պառկե. էլի թամաշա արա, դներ կտանեն կախելու:

Տղեն խե լսելուն էտա խա̈բա̈ր, համան կվազի թակավորի մոտ. կասի. - Թակավոր ապրած կենաս, կես սահաթ զի ժամանայ տուր, իմ ախպերներ մի կախե, չում ես իմ ասելիք քյե ասեմ:

Թակավորն ասաց. - Ասա՛, տվի քյե ժամանակ:

Տղեն իխան տյուս բլազյուկ, ասաց. - Էնա մեյ ջովստ, էնա էրկու ջովստ, էնա էլ մէ թաքյ:

Թակավորն ասաց. - Էնա ճիշտ էն բլա̈զկներն են:

Հրաման արաց, որ դներ չկախեն, էօրեոխկեց յահուդին իպե:

Ասաց. - Յահուդի՛, արե, քյու դավուց վազն արե, խեղճ ես, մեղքյ ես:

Յահուդին ասաց. - Հե՛յ, իրեք խարիր ոսկի իմ փարեն, խարիր էլ էն ժողովուրթի փա̈րեն կերիցուցեր եմ, ես իսկի իմ դա̈վուց վա՞զ կուգյա̈մ:

Էն էլ ասաց. - Է՛յ, արթխ քյո մուր, քյո ճակատ:

Խանեց բլազկներ իտիր դեմ: Յահուդին որ տեսավ, մո տեղնստեղ չորցավ:

Յահուդին պիրիցին կախիցին, իսկ դներաց թողին պա̈ց, էկան:

Տղեն իխան բլա̈զկներ, իրեքյ ջուխտն էլ իտուր դներաց, ասաց. - Տարե՛քյ, կերեքյ, չում ծեր մախ ծե խերիպյ ի:

Դներ կնացին խետ ուրենց պա̈նին:

Տղեն փիտուր իտու կրակ, էկավ էն խավքյ: Տղին առեց վեր ուր թիվքյերաց, թռավ խետ երկնուց, տարավ չում ուրենց տուն, էճավ տակ, տղին իտիր տան մեչ:

Տղեն առեց էն իրեքյ աղչիկ, նստավ. էն խասավ ուր մուրազին, տյուք էլ՝ ծեր: